ԳՅՈՒՄՐՈՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

ԱՐԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
արվեստագիտության թեկնածու
ԵԳՊԱ դոցենտ (Գյումրու մասնաճյուղ)

Գյումրին Հայաստանի երկրորդ քաղաքն է, որտեղ յուրօրինակ կերպով խաչաձևվում ու համադրվում են Արևելքն ու Արևմուտքը, հինն ու նորը, ավանդականն ու ժամանակակիցը (նկ. 1): Խոսելով Գյումրու մասին՝ այն հաճախ անվանում են «կայսերական գավառական քաղաք, ամրոց-խաչմերուկ, խորհրդային արդյունաբերական, մշակութային, վարչական կենտրոն և ավերված մոռացված ու անկախացած բնակավայր»:

Գյումրու՝ իբրև քաղաքային բնակավայրի պատմությունը, քաղաքաշինությունը, մշակութային նկարագիրը պայմանականորեն բաժանվում է երեք շերտի՝ Ալեքսանդրապոլ (1837-1924), Լենինական (1924-1990), Գյումրի (1990-մինչև օրս): Քաղաքի անվանումը յուրատեսակ կերպով թելադրում էր նրա դիմագիծն ու համբավը: Վիզուալ առումով ևս քաղաքը բաժանվում է երեք գունային շերտերի. Ալեքսանդրապոլի կառույցներում գերիշխում է սև տուֆը, Լենինականում՝ վարդագույնը, Գյումրիում՝ դեղինը:

Ալեքսանդրապոլը ձևավորվել է XIX դ., մի կողմից՝ ռուսական քաղաքաշինական ավանդույթների (ուղղահայաց-հորիզոնական հատակագիծ, ամրոցաշինական սկզբունքներ), մյուս կողմից՝ տեղական ավանդույթների (կարմիր ու սև տուֆից կառուցված շենքեր, պատուհանների, շքամուտքերի ձևավորման որոշակի տիպ) յուրօրինակ համադրությամբ (նկ. 2, 3): Քաղաքի առաջին հատակագիծը (*Գենպլանը*) կազմվել է ռուս մասնագետների կողմից 1837 թ.՝ 15000 զինվորներից կայազոր ունեցող ամրոցի համար, որի դեպքում հաշվի չի առնվել տեղական լանդշաֆտը: Նորակառույցներին գումարվում են Գյումրու «գեղջկական» թաղերը, որոնք կառուցվել էին դեռևս XIX դ. սկզբին՝ քաղաքին տալով ինքնատիպ նկարագիր: Այդ ժամանակ Գյումրու փողոցները ստացան կտրուկ ռելիեֆ, ինչպես գյումրեցիներն են ասում՝ «դար ու փոս»:

Երկրորդ հատակագիծն ընդունվել է 1905 թ.՝ 30000 բնակչության համար[1]: Որ Ալեքպոլն ուներ բավականին զարգացած քաղաքային նկարագիր, վկայում է քարիզների ցանցի գոյությունը, որ ձգվում էր հյուսիսից հարավ՝ բնակավայրին ջուր հասցնելով գետերի հունին համապատասխան:

Ռուսական քաղաքաշինությունից և տեղական ճարտարապետության ավանդույթներից էլ ձևավորվում է ինքնատիպ քաղաքային նկարագիրը: Սակայն

ինչպես նշում է ճարտարապետ Ռ. Եղոյանը, կառույցները ո՛չ հայկական են, ո՛չ ռուսական. դա յուրօրինակ «Գյումրու ոճն» է՝ էկլեկտիկ համադրությունների ամբողջություն՝ հասցված ուրբանիստական ձեռագրի:

1926 թ. հաստատվում է երրորդ՝ խորհրդային Լենինականի գլխավոր հատակագիծը՝ ճարտարապետ Դ. Չիսլյանի նախագծով: Կառուցվում են առաջին տիպային շինությունները: Հիմք ընդունելով կոմունիստական քաղաքաշինության սկզբունքը՝ անվանափոխված Լենինականը ֆիզիկապես ևս վերափոխվում է. կառուցվում են երկաթգծի կայարան, գործարաններ, բարձրահարկեր: Նրա «խորհրդային կնիքը» կարելի էր գտնել *Մայր Հայաստան* հուշակոթողում, Հաղթանակի պուրակում ու Աստղի հրապարակում, Լենինի ու Շահումյանի արձաններում (նկ. 4, 5): Հատակագծային առումով վերևից կարելի էր տեսնել մուրճ ու մանգաղ՝ Կիրովի փողոցի ու Հաղթանակի պուրակի համադրության ուրվագծով[2]:

1988 թ. երկրաշարժը կտրուկ փոխեց քաղաքի բնականոն ընթացքը՝ ղեկավարությանը կանգնեցնելով անխուսափելի ընտրության առջև: Մ. Գորբաչովի հնչեցրած՝ երկու տարում քաղաքը վերականգնելու խոստումը հանգեցրեց արագ որոշում կայացնելու անհրաժեշտությանը: Անտեսելով տեղացի մասնագետների կարծիքն ու հիմնավորված փաստարկները՝ որոշվում է օգտագործել քաղաքի հյուսիսային հատվածում գտնվող վարելահողերը:

Սակայն սկսված տարերային շինարարությունը կարճ ժամանակահատվածում կանգ առավ՝ Խորհրդային Միության փլուզման, Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման, Ղարաբաղյան պատերազմի, էներգետիկ ճգնաժամի հետևանքով: Նոր թաղամասը՝ հայտնի 58-րդ (Անի) անվամբ, դարձավ քաղաքի կցորդ-հավելված: Շնորհիվ միջազգային համերաշխության և Հայկական սփյուռքի ակտիվության, սկսեցին կառուցվել ավստրիական, նորվեգական, իտալական թաղամասերը, անգլիական, ֆրանսիական, հունգարական դպրոցները: Լինսի հիմնադրամի շնորհիվ կառուցվեցին միջազգային պահանջներին համապատասխանող կառույցներ, ինչը նպաստեց նոր շինարարական տեխնիկայի ներմուծմանը Գյումրի: Այսօրվա Գյումրին «*վերածվել է մի քաղաքի, որն աղրում է ոչ միայն կայսրությունների թողած սոցիալական և բարոյահոգեբանական, այլ նաև նրանց ճարտարապետական-քաղաքաշինական ավերակների վրա: Կործանման ու ավերման հետքերը հանրապետության ոչ մի քաղաքում այնքան ակնառու դրոշմված չեն, որքան այս քաղաքում*»[3]:

Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի եռամիասնության ամբողջական նկարագիրն ու անդրանցական վերափոխումների առհավատչյան է ներկայացնում Գյումրու կենտրոնական հրապարակը (նկ. 6). *Յոթվերք* ու *Ամենափրկիչ* եկեղեցիները գտնվում են դեմ-դիմաց՝ վկայելով Ալեքսանդրապոլի մոնումենտալ գեղեցկությունը, *Հոկտեմբեր* կինոթատրոնը, հյուրանոցային համալիրը, Հայ-

խնայբանկի կառույցները խորհրդանշում են խորհրդային Լենինականը, իսկ վերջերս կառուցված քաղաքաթետարանի շենքն ու մետաղյա կոնստրուկցիաներով հավաքված «Զիգզագ» կոչվող շինությունը, որն այժմ ծառայում է իբրև բանկի մասնաշենք, գումարած՝ Վարդանանց արձանախումբը՝ արտահայտում են անկախության շրջանի Գյումրու անկանոն դիմագիծը (նկ. 7):

Ալեքսանդրաթոլը մշակութային ավանդույթներով հարուստ քաղաք էր: 1913 թ. Բրուտյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է առաջին նկարչական ցուցահանդեսը, իսկ 1916 թ. ստեղծվել է նկարիչների առաջին միությունը: 1921 թ. Ալեքսանդրաթոլում բացվել է Անդրկովկասում առաջին նկարչական դպրոցը, որտեղ դասավանդում էին Եղիսաբեթ Պատկանյանը, Յուլիա Վերբժիցկայան, Աշոտ Սաֆարյանը:

Քանդակագործությունը Ալեքսանդրաթոլում ինքնավար կերպով չի զարգացել: Սակայն շիրմաքարերի, շինությունների քիվերի ու շքամուտքերի մշակումը խոսում է բարձր վարպետության մասին, որին տիրապետում էին տեղացի արհեստավորները (նկ. 8): Մոնումենտալ պլաստիկայի մեծ վարպետ, ծնունդով գյումրեցի Սերգեյ Մերկուրովը (1881-1952) իր հուշերում սիրով հիշատակում է ալեքսանդրացի քարտաշ վարպետներին, որոնք նրան երիտասարդ տարիքում պատգամել են. «*Այնպես աշխատիր, որ վարդերը քո կտրիչի տակ բուրեն ավելի լավ, քան իսկականը, և բլբուլն իր երգով իսկականից հազար տարով ավել դիմավորի արևածագը*»[4]: Նա ավելացնում է, որ ինչ հունար որ ունի՝ «*Գյումրու հող ու ջրեն է: Չէ՞ որ էդ օրհնված քաղաքը խուդոժնիկ քաղաք է, ինտեղ առանց հունարի մարդ չես գտնի*»:

Այս ավանդույթները շարունակվում են Լենինականում, որտեղ միայն 1929-34 թթ. ընթացքում կազմակերպվել է երեք ցուցահանդես: XX դ. 30-ական թթ. քաղաքի մշակութային կենտրոնը դառնում է Լենինականի թատրոնը, որի ձևավորման աշխատանքներում ներգրավվում են լավագույն նկարիչները: 1935 թ.-ից Լենինականում գործում է տիկնիկային թատրոնը: Սկսում է զարգանալ բեմանկարչությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին լենինականցի նկարիչները՝ Իս. Եսայանը, Գ. Բրուտյանը, Մ. Ասլամազյանը, Հ. Ռուխկյանը, իրենց ստեղծագործություններով քաջալերում էին ռազմաճակատում կռվող զինվորներին, ստեղծվում են ծաղրանկարներ, քաղաքական պլակատներ: Երբ 1942 թ. Մարիամ Ասլամազյանը ավարտում է «Հերոսի վերադարձը» կտավը, այն դառնում է հաղթանակի նոր բացահայտում և ոգեկոչում: 1942 թ. Մոսկվայից վերադառնում է Շանթ Սարգսյանը. նա էլ իր ձեռքն է վերցնում քաղաքի մշակութային կյանքի կազմակերպումը՝ ստանձնելով նկարչական դպրոցի տնօրինությունն ու իր շուրջը համախմբելով Լենինականում ստեղծագործող նկարիչներին՝ Հ.

Սահակյանին, Հ. Անանիկյանին, Գ. Կարաղետյանին, որոնց շնորհիվ էլ ստեղծվում է Նկարիչների միության Լենինականի բաժանմունքը:

1960-ականներին Լենինականում ստեղծագործում են Ա. Հովհաննիսյանը, Ա. Մելքոնյանը, Մ. Թոքմաջյանը, Իս. Վարդապարոնյանը, Ս. Միրզոյանը, որոնց կողքին ստեղծագործական ուղին է սկսում շիրակցի գեղանկարիչ Մինաս Ավետիսյանը: Այն, ինչ հայտնի է «Շիրակի գունազգացողություն» անվամբ, առավել բնութագրական է Մինաս Ավետիսյանի ու Աշոտ Հովհաննիսյանի ստեղծագործությանը, որտեղ գույնը ստանում է դրամատիկ հնչեղ երանգավորում: Մինասի ստեղծած որմնանկարները՝ «Թորոս Ռոսլինի ծնունդը», «Իսաչքարի մոտ», «Գորգ են գործում», որոնք զարդարում են անալիտիկ սարքերի, «Ստրոմմաշինա», գալվանոմետր գործարանները, այսօր գտնվում են աղետալի վիճակում և պահպանման ու վերականգնման կարիք ունեն: Նմանատիպ վիճակում են նաև Ռ. Աթոյանի, Հ. Հակոբյանի, Հ. Մինասյանի ստեղծած որմնանկարները, որոնք ցրված են քաղաքի տարբեր հատվածներում:

Ծագումով գյումրեցի նկարիչներ Հ. Անանիկյանի, Ռ. Աթոյանի ստեղծագործության առանցքում Գյումրին է, նրա հին ու նոր կերպարը, մարդիկ ու բարքերը («Պոլոզ Մուկուչ», «Թոքմաջենց Սերոբը», «Ֆոնջի Սիմոնը»): Տեղաբնիկ նկարիչների կողքին Լենինականում աղրել ու ստեղծագործել են Հակոբ Հակոբյանը, Պետրոս Կոնտուրջյանը. Հակոբյանի լավագույն բնանկարներից են «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն», «Վաղ գարուն» կտավները, որոնք բացահայտում են քաղաքը ու նրա գողտրիկ փողոցների մետաֆիզիկական լռությունն ու մոնումենտալ գեղեցկությունը:

1981թ. բացվում է Հայաստանի պատկերասրահի Լենինականի մասնաճյուղը: Լենինականում մեծ թափ է առնում մոնումենտալ քանդակագործությունը. քանդակը գալիս է լրացնելու ճարտարապետությանը: Ավետիք Իսահակյանի արձանը (Ն. Նիկողոսյան) ամբողջացնում է թատերամերձ հրապարակը, կառուցվում է Մայր Հայաստան հուշահամալիրը (ճարտ՝ Կ.Եղոյան), որի սիրտն է դառնում Արա Սարգսյանի կերտած «Մայր Հայաստան» հուշարձանը: Լենինականի այցեքարտերից էին Ս. Մերկուրովի կերտած Լենինի, Շահումյանի հուշարձանները, ինչպես նաև արվեստի վաստակավոր գործիչների ու հեղափոխականների կիսանդրիները: Վերջիններս, ցավոք, ժամանակի իրադարձությունների թելադրանքով աղամոնտաժվել են քաղաքից:

Քաղաքի անկրկնելի կոլորիտը իր ստեղծագործություններում բացահայտել է Ձավեն Կոշտոյանը՝ «Ջութակահար», «Շերամ», «Գյումրեցի կին», «Երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին» գործերում: Նրա արվեստը մարմնավորում է գյումրեցու մտածողությունն ու արժեհամակարգը:

1988 թ. երկրաշարժը խաթարեց քաղաքի մշակութային բնականոն ընթաց-

քը: Քաղաքի նոր զարգացումները կապված են հետերկրաշարժյան Գյումրու մշակութային նկարագրի հետ: Երկրաշարժին հաջորդած տարիներին օրվա հրամայականը դարձավ մարդկանց աղահովել տանիքով ու տարրական կենցաղային պայմաններով: Նման իրավիճակում անիմաստ էր խոսել մշակութային հիմնարկների վերականգնման մասին: Սակայն քաղաքի վերածնունդն ու վերականգնումը կարելի է սկսված համարել, երբ 1997 թ. հիմնվում է Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղը: Նրա հիմնումը շրջադարձային դեր է կատարել քաղաքի մշակութային կյանքում, քանի որ այն համախմբեց քաղաքի ստեղծագործ ուժերը և դարձավ մշակութային օազիս՝ ստանձնելով ցուցահանդեսների կազմակերպումը, մշակութային միջոցառումների անցկացումը, գյումրեցիների նոր սերնդի գեղարվեստական կրթումն ու դաստիարակումը: Կարևոր իրադարձություն էին նաև Գյումրու բիենալեի հիմնումն ու անցկացումը, որը նշանակալի ներդրում բերեց Գյումրու ժամանակակից արվեստի ձևավորման ու զարգացման գործում: Բիենալեի հիմնադիրները՝ Վազգեն Պահլավունի-Թադևոսյանը (ՎԱՂՕ) և Արարատ Սարգսյանը գտնում էին, որ «*Գյումրու բիենալեն առավել քան նոպաստավոր վայր էր, որտեղ հնարավորություն էր տրվել Ավանդույթը, Պատմությունը որպես այդպիսիք պահելով՝ մի քայլ առաջ գնալ՝ ստեղծելով ու կառուցելով աղագան, որը ուղղված կլիներ ոչ թե դեպի պատմական ակնարկների կամ անդրադարձների, կոնկրետ ասած՝ այն լինելու էր հենց ինքը այդ աղագան*»[5]: Անցկացված ութ բիենալեները փաստում են, որ մի կողմից՝ փորձ էր արվում շարունակել ավանդույթը, մյուս կողմից՝ տեղափոխվել այլ՝ ժամանակակից իրականության դաշտը: Այս իրավիճակը հիշեցնում է Յուրգեն Հաբերմասի «անցյալի արդիականություն» արտահայտությունը՝ անցյալի ժամանակակից լինելու փաստը[6]:

Քաղաքում արձաններ կանգնեցնելը տարերային բնույթ է ստանում երկրաշարժից հետո: Որպես կանոն՝ դա կատարվում է՝ առանց հաշվի առնելու տեղանքի կապը հուշարձանի հետ: Նման ձևախեղման օրինակ են թատերամերձ հրապարակում կանգնեցված Հ. Շիրազի ու Մ. Մկրտչյանի արձանները (քանդ.՝ Արա Շիրազ), որի պատճառով հրապարակը կորցրեց ամբողջական նկարագիրը:

Մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Գյումրին այսօր հայտնվել է մշակութային երկփեղկման դաշտում: Քաղաքն ունի ստեղծագործական ներուժ, չունի այն զարգացնելու հնարավորություն, ունի նկարչական դպրոց, չունի նկարչական դպրոցի մասնաշենք: Ունենալով բազմաշնորհ նկարիչներ՝ չունի պատկերասրահ, ժամանակակից արվեստի թանգարան:

1. Гукасян В. *Гюмри*, Тигран Мец, 2009, стр. 159-169.
2. Шагоян Г. Первый и второй в образах Гюмри: опыт семиотического анализа городского текста, *Критика и семиотика*, вып. 16, 2012, էջ 25
3. *First international biennial 1998,* Gyumri, GCCa-ԳԺՍԿ
4. Меркуров С. Д. *Воспоминания. Письма. Статьи. Заметки. Суждения современников:* Москва, 2012, стр. 67.
5. Կ. Գուսարենկո, *Գյումրու միջազգային բիենալե Հայաստանի ժամանակակից արվեստի համատեքստում* (անտիպ), Գյումրի, 2010:
6. Хабермас Юрген, *Модерн-незавершенный проект*, 1998.

THE TRANSFORMATION OF GYUMRI IN THE PANORAMA OF CULTURAL HERITAGE

ARAKSYA MARGARYAN
PhD in Art History
Associate Professor at YSAFA (Gumri branch)

Gyumri is the second city in the Republic of Armenia, where imperial provincial city, stronghold-crossroad, soviet industrial- cultural- administrative centre and ruined forgotten and independent residence are pecualiarly crossed and confronted with each other. Gyumri's city history, city planning and cultural description are symboliacally divided into three levels: Aleksandrapol/ 1837-1924/, Leninakan/ 1924-1990/, Gyumri/1990-up to date/. The city name in its way tells us about its characteristics and fame. Visually the city divides into three color levels: Aleksandrapol constructions were built of black tuff, in Leninakan-pink tuff and in Gyumri- yellow one.

ПРЕОБРАЖЕНИЕ ГЮМРИ В ПАНОРАМЕ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

АРАКСЯ МАРГАРЯН
кандидат искусствоведения
доцент ЕГАХ (филиал Гумри)

Гюмри-второй по величине город РА, в котором своеобразно скрестились и сосуществуют и царский провинциальный город, и пограничный город-крепость, и советский промышленный и культурный административный центр, и разрушенный, забытый, независимый населеный пункт. История Гюмри, как городского населенного пункта, его строительство и культура условно делятся на три периода: Александрополь (1837-1924), Ленинакан (1924-1990), Гюмри (с 1990г. по сей день). Наименование города ярчайшим образом отражает его облик и репутацию. Визуально город делится на три цветочых пласта. В строениях александрапольского периода преобладает черный туф, ленинаканского-розовый, а гюмрийского-желтый.

1. Լենինականյան տեսարան



2. Ալեքսանդրապոլյան շրջանի առանձնատուն /այժմ՝ Վիլլա Կարս

3. հին թատրոնի շենքը / այժմ՝ Թումոյի կենտրոն

1. Խորհրդային շրջան. Մայր Հայաստան

5. 6. Գյումրու կենտրոնական հրապարակ

7, Գյումրու կենտրոնական հրապարակ. քաղաքապետարանի շենքը եւ Վարդանանց արձանախումբը

8. ճարտարապետական հարդարանքի նմուշ